ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« -------» հունիսի 2016թ. N-------- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի 07.06.2016թ. հ.L106/2016 գրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի արտաքին լուսավորության արդիականացման և գեղարվեստական լուսավորման ապահովման նպատակով Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են մայրաքաղաքի Իսակովի և Մաշտոցի պողոտաների, Հաղթանակի կամրջի, Երևանի կենդանաբանական այգու արտաքին լուսավորության արդիականացման, ինչպես նաև Հանրապետության և Շառլ Ազնավուրի անվան հրապարակների գեղարվեստական լուսավորման ապահովման աշխատանքներ:

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջև 2014 թվականի օգոստոսին ստորագրված Մտադրությունների մասին հուշագրի համաձայն՝ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի պիլոտային նախագծի շրջանակում Իսակովի պողոտայի և Թաիրովի փողոցի՝ մինչև «Զվարթնոց» օդանավակայանի խաչմերուկ ընկած հատվածի(9կմ ընդհանուր երկարությամբ) արտաքին լուսավորության ցանցի արդիականացման նպատակով ձեռք են բերվել 508 ժամանակակից, էներգախնայող և առավել երկարակյաց լուսադիոդային լուսատուներ (213 Վտ և 99 Վտ), որի արդյունքում 756 նատրիումային լուսատուները (250 Վտ)/ փոխարինվել են լուսադիոդային լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով: Տեղադրման աշխատանքներն իրականացվել են «Երքաղլուս» ՓԲԸ կողմից: Երևանի քաղաքապետի՝ 30.07.2015թ. «Երևանի քաղաքապետարանի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջև 2014թ. ստորագրված «Մտադրությունների մասին» հուշագրի դրույթների կատարումն ապահովելու մասին» հ.2354-Ա որոշմամբ հաստատվել է «Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման նպատակային ֆոնդի հաշվի միջոցների օգտագործման» կարգը, որի արդյունքում 2015թ. «Երքաղլույս» ՓԲԸ-ում ստեղծվել է վերականգնվող նպատակային ֆոնդ (բանկային հաշիվ): Ֆոնդի սկզբնական համալրումն իրականացվել է Իսակովի պողոտայի պիլոտային նախագծի արդյունքում լուսավորության համակարգի շահագործման և պահպանման տարեկան ծախսերի նվազեցումից առաջացող խնայված միջոցների հաշվին: Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջև 2014 թվականի դեկտեմբերին ստորագրված Մտադրությունների մասին հուշագրի և երրորդ կողմի ծախսերի բաշխման մասին համաձայնագրի համաձայն՝ խնայված միջոցների հաշվին, ինչպես նաև ՄԱԶԾ համաֆինանսավորմամբ իրականացվել է Հաղթանակի կամուրջի և Մաշտոցի պողոտայի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, որի արդյունքում ձեռք են բերվել 356 լուսադիոդային լուսատուներ (36, 106 և 139 Վտ), որից 99 լուսատուի մատակարարումը նախատեսվում է հունիս ամսվա ընթացքում:

Երևանի կենդանաբանական այգու լուսավորության համակարգի արդիականացման, էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներն իրականացվել են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Երևանի քաղաքապետարանի համատեղ համաֆինանսավորմամբ, համապատասխանաբար՝ 35% և 65% համամասնությամբ: ՄԱԶԾ ֆինանսավորմամբ ձեռք է բերվել 115 էներգաարդյունավետ լուսատու (39Վտ), քաղաքապետարանի ֆինանսավորմամբ փոխարինվել են սյուները, մալուխներն անցկացվել են ստորգետնյա եղանակով: Տեղադրված էներգաարդյունավետ լուսադիոդային լամպերը՝ նույն լուսավորությունն ապահովող բարձր ճնշումային նատրիումական լամպերի համեմատությամբ ապահովում են էլեկտրաէներգիայի մոտ 77% տնտեսում:

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի միջև 2011թվականի հուլիսի 14-ին և դեկտեմբերի 20-ին ստորագրված համաձայնագրերի համաձայն իրականացվող «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակում՝ ձեռք են բերվել ձմեռային լուսային շատրվաններ՝ Հանրապետության և Շառլ Ազնավուրի անվան հրապարակներում ամանորյան տոնական լուսավորության ապահովման նպատակով:

Նվիրատվության ենթակա գույքի տեղակայման փողոցները և վայրերը համաձայնեցվել են Երևանի քաղաքապետարանի հետ՝ առաջնորդվելով մայրաքաղաքի բարեկարգման և գեղարվեստական լուսավորման ծրագրով:

Նվիրատվության ենթակա գույքի անվանացանկը ներկայացվում է հավելվածով։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2016թ. բյուջեում, եկամուտներում և ծախսերում էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » _____ 2016թ.
Հ._____-Ա որոշման

ՑԱՆԿ
ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԳՈՒՅՔ

Հ.	Լուսավորման սարքավորման անվանումը	Հզորությունը	Քանակը	Տեղադրման փողոց/վայր
1	3	4	5	6
1.	Ampera Maxi 96LED-700մԱ	213W	290	Իսակովի պողոտա
2.	Ampera Midi 64LED-500մԱ	99W	218	Իսակովի պողոտա/Թաիրովի փողոց
3.	LED լուսատուներ ISLALD տեսակի 003A4 24 LED 500 mA ISLALD-NW0003A4-5068AS-GL01-V02D00-S3-CJ3E-C000-P3-N0-N	39W	115	Երևանի կենդանաբանական այգի
4.	Ampera Midi 48 / 700mA 5137	106W	27	Հաղթանակի կամուրջ
5.	Ampera Midi 64 / 700mA 5102	139W	115	Մաշտոցի պողոտա /մինչև Ֆրանսիայի հրապարակ/
6.	Ampera Mini 16 / 700mA 5102	36W	115	Մաշտոցի պողոտա /մինչև Ֆրանսիայի հրապարակ/
7.	Ampera Midi 64 / 700mA 5102	139W	54	Մաշտոցի պողոտա՝ Ֆրանսիայի Հրապարակից մինչև Կորյուն ընկած հատված
8.	Ampera Mini 16 / 700mA 5102	36W	45	Մաշտոցի պողոտա՝ Ֆրանսիայի Հրապարակից մինչև Կորյուն ընկած հատված
9	Լուսային շատրվան վեց ջրաշուշաններով		1 լրակազմ	Հանրապետության հրապարակ
10	Լուսային շատրվան		1 լրակազմ	Շառլ Ազնավուրի անվան հրապարակ